



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԼՈՒՍԱԿՈՐԶԻ ԳԻԼԵՒ ՎՐԱ

Հոկտեմբերի 4-ին, կիրակի օրը, Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ ներկեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգամյակը: Հիշարժան այս օրը մի հանգրվան հանդիսացավ Մայր Աթոռ ա. Էջմիածնի և նրա գահակալի եկեղեցաշեն և հայրենանվեր տասնհինգամյա գործունեության ճանապարհի վրա:

1955 թվականի սեպտեմբերի 30-ին Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի ընտրությունը և հոկտեմբերի 2-ին՝ գահակալությունը Լուսավորչի Աթոռի վրա հանդիսացան մեր ազգային-եկեղեցական ժամանակակից տարեգրության պատմական տարեթվերի էջերը:

Այդ բարեբախտիկ օրվանից անցել են աշխատանքի, կառուցումների, հայրողությունների և ղեկավարությունների տասնհինգ տարիներ՝ իր հոգևոր, եկեղեցաշեն, հայրենանվեր ու մշակութային ոգևորչ իրագործումներով՝ ի պայծառություն և ի պահպանություն մեր սուրբ հավատի, ի միախորություն հայ ժողովրդի և ի բարօրություն հայրենյաց: «Ջի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ, ...գի զանճն իւր մատուց պատարագ» (Երբ. է՝ 28):

Արդ-սրև, անցնող տասնհինգ տարիներում կամքի մեծ լարումով կատարված գործունեությունը պայծառորեն ցույց տվեց, որ հանձնին Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի, մեր եկեղեցին ունեցավ իր ներշնչյալ, շինարար հայրապետներից մե-

կին, ի իմացական ու բարոյական շնորհներով, Հայրապետ, Որը Իր վրա է կրել հայրապետական ծանր լուծը՝ կոյման և պարտքի խորին գիտակցությամբ:

**Հայրապետական գահը Ավետարանի ծանր ու քաղցր լուծն է,** քան փառքի և պատվի հանգստարան: Իգուր չէ, որ Արսզանի կատարին, Լուսավորչի կանթեղի մեջ հավերժորեն վառվում են Հայոց Հայրապետների ջինջ արցունքները «յուղի տեղակ»:

Հայոց Հայրապետը Իրեն հատուկ գործիմացությամբ և երիտասարդական կորովով անցնող տասնհինգ տարիների ընթացքում գլուխ բերեց Մայր Աթոռի հոգևոր, վաճառական, կրթական-վարչական և տնտեսական կյանքի վերակառուցման աշխատանքները:

Իր գահակալության առաջին իսկ օրից Մայր Աթոռի միաբանությունը շրջապատեց հայրական գուրգուրանքով և ջերմությամբ: Մայր Աթոռում ստեղծվեցին խաղաղ ու առողջ հիմքերի վրա դրված կյանք ու միաբանական մթնոլորտ: Հայոց Հայրապետը Իր հոգածու ուշադրությունը կենտրոնացրեց մանավանդ Մայր Աթոռի երիտասարդ միաբանության հոգևոր դաստիարակության և բարոյական նկարագրի կազմության վրա: Հայոց Հայրապետը Իր հոգևոր գավալկներին՝ Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին ներշնչել է հոգևոր կոյման և ազգային-հայրենասիրական առաքելության գիտակցությունն ու զգացումը, հայ եկեղեցու, հայ ժողովրդի և հայոց վերածնված հայրենիքի համար ապրելու և գործելու գաղափարա-

կան գեղեցկությունը: Այդ իսկ նպատակով, Իր գահակալության 15 տարիների ընթացքում, Հայոց Հայրապետը Իր սրտին մոտ հաստատություն է դարձրել հոգևոր ճեմարանը՝ մեծ հույսեր կապելով նրա գոյության և գործունեության հետ և ճեմարանի առաջ նոր խնդիրներ դրել, որոնց կատարումը պահանջում էր սխառեմատիկ աշխատանք, եռանդ ու նվիրում:

Տասնհինգ տարիների ընթացքում Հայոց Հայրապետի առաջ կանգնած կարևոր հարցերն էին Մայր Աթոռի և ներքին թեմերի վարչա-տնտեսական գործունեության կազմակերպումն ու բարեկարգումը, ինչպես նաև Մայր Աթոռում և նրա շրջակայքից դուրս շինարարական և վերանորոգչական մի ամբողջական ծրագրի կենսագործումը, որոնք կատարվեցին ոգևորիչ արդյունքներով:

Հայոց Հայրապետի գահակալության 15 տարիների ընթացքում արտասահման կատարված հովվապետական ուղևորությունները հանդիսացան մեծ իրադարձություններ սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքում:

Հայոց Հայրապետի օրով առավել քան կանոն և սերտ հարաբերություններ մշակվեցին և պահպանվեցին մեր ավիրապետական Աթոռների, նրանց գահակալների, թեմերի կենտրոնների հետ, համարպնդումն և ի շինությունն հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր, ազգային-եկեղեցական կյանքի: Հայոց Հայրապետը միշտ հանդես է եկել հայ եկեղեցու միասնությանը ապահովող պատկառումների դեմ, համերաշխության, սիրտ սրտառույ պատգամով և կոչով, թելադրված հայ ժողովրդի գերազույն շահերից:

Հայոց Հայրապետը Իր սրտով ընդգրկել է աշխարհի բոլոր հայաբնակ վայրերը և Իր հայրական կենդանի խոսքն ու պատգամը հասցրել է ամեն տեղ՝ Աթրիխաս, Երուսաղեմ, Կ. Պոլիս, Եվրոպա, Ամերիկա, Եգիպտոս ու Եթովպիա, Հնդկաստան ու Հետևիդու Արևելք, ուր հայության բեկորներ կան գաղթական, և Իր հոգեշունչ և հայրենասիրտ լուրջակներով, քարոզներով հուսադրել բոլորին, ս. էջմիածնի օրհնությամբ:

Սույն ժամանակահատվածում պահպանվեցին և էլ ավելի սերտացան Մայր Աթոռի և բոլոր եկեղեցիների շղթայական կապերը՝ էկումենիկ ոգով: Դեռ բոլորի հիշողության մեջ թաքնված է այս տարի մայիսյան օրերին Հայոց Հայրապետի պատմական այցելությունը Հռոմ՝ Սրբազան Քահանայապետին:

Հայոց Հայրապետի գահակալության տարիների բեղմնավոր գործունեության մեջ մասնավոր տեղ էր հատկացվել խաղաղության պաշտպանության դատին, ժողովուրդ-

ների համագործակցության և բարեկամության գաղափարին, ավետարանական վեհ պատգամների լույսի տակ:

Հայոց Հայրապետի գահակալության տասնհինգամյակի այս հանդիսավոր հանգրվանին երախտագիտությամբ պետք է նշել նաև մեր հայրենի կառավարության հույժ լայնախոհ վերաբերմունքը դեպի Մայր Աթոռ ու էջմիածինը և դեպի նրա Գահակալի գործունեությունը: Հայոց Հայրապետը միշտ Իրեն գործվիզ է ունեցել պետության և եկեղեցու միջև ստեղծված իրավական, գործնական, բնականոն պայմանները, որոնցով հնարավոր եղան իրագործումները, հոգևոր, եկեղեցական, մշակութային և շինարարական ծրագրերի և ձեռնարկների:

**Ս. էջմիածին և Հայոց Հայրապետություն:**

Ս. էջմիածինը մեր հոգևոր, հայրենասիրական ապրումների բարձունք է, Ավետարանի լույսին բացվելու Հայկական Կերպր, մեր հոգևոր ինքնապաշտպանության ամրոցը:

Հայոց Հայրապետությունը արթուն պահակն է մեր գոյության, մեր քաբախող Սիրտը և Օջախը հայ ժողովրդի մշտավատ հայրենասիրության:

Իսկ Հայոց Հայրապետը մեր Հավատքի Անձնավորումը, մեր հոգեկան ձգտումների, ազնվագույն իղձերի և հայեցի առաքինությունների բյուրեղացած արտահայտությունը, արթուն Խիզը հայության:

**Խորհուրդը** Լուսավորչի տեսիլքի և հայոց պատմության, **Հեղինակությունը** հայրապետական գերազույն իշխանության, սրբազան խորհրդալույսներն են, առանց որոնց չի կարելի հասկանալ էջմիածինն ու հայ եկեղեցին, ինչպես անբռնելի է հայությունը առանց հայրենի հողի:

Գուցե մեր պատմության մեջ քիչ անգամներ հայ ժողովուրդը այսքան միասնական է եղել իր հավատարմության, սիրուն և պարտամունքի մեջ դեպի ս. էջմիածինը ու նրա աստվածատաք Գահակալը, ինչպես մեր օրերին:

Սփովել ենք ճակատագրի տխուր բերումով թանկագին, բայց փշրված աղամանդների նման աշխարհով մեկ, բայց միացել ենք ս. էջմիածնի խորհրդով և օրհնությամբ և վերածնված հայոց աշխարհի կենդանարար շնչով:

Մայր Աթոռը Հայոց Հայրապետի գլխավորությամբ և ս. էջմիածնի աստվածապարզ շնորհներով գործադած, մեր ժողովրդի հավատքի, տեսիլքի և հայրենասիրության կենդանի ուժերով կշարունակի մեկ և անքաժան պահել հայ եկեղեցին, մեկ ու ամբողջական՝ հայությունը:

Այսօր, մեր բոլորի երախտագիտության և խորը հարցանքի առարկա է դառնում 15 տարիների վրա պատարագված Հայոց Հայրապետի կյանքը, որը եղավ պաշտառ հավատքի, անդուլ աշխատանքի և ոգեշունչ իրագործումների մի շրջան:

Բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն է, որ Լուսավորչի Աթոռը հավերժո-

րեն պաշտառ և կանգուն մնա և Հայոց Հայրապետի կյանքի օրերը լինեն երկար, արեւիտ, նորաճող իրագործումներով գեղեցկացած:

**«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և զերկրպագոս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան»:**

